Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 15 ՄԱՅԻՍ 1899 — Թիւ 128

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Ուղղարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—)(—
Ուղարկման տոկոսը 20 սանթիմ է. Երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Տպատսխանատու Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեան հասցէին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Գրութիւնք ետ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

—Ո՛չ, նորէն վարդապետի, տէրտէրի խնդիր...

Մեր խորագիրը կարդալով այսպէս ըսեն թերեւս բոլոր այն լուսամիտները, որոնք մեր կղերին ընթացքէն յուսահատ, ալ դադրած են անկէ բան մը սպասելէ։

Իրաւունք տալով ատոնց «Շարժումի» էջերը չի պիտի լեցնէի կրօնական խնդիրներով, չի պիտի ղբաղէի կղերով, եթէ իրականին մէջ իսկապէս ատոնք դադրած ըլլային մեզի համար բան մը ըլլալէ։

Եւրոպայի մէջ կղերը կորսընցուցած է իր նախկին նշանակութիւնը և հեղինակութիւնը, հանրային գործերու մէջ ղլխաւոր վարող ձայնը պապին և կամ ժողովրդապետինը չէ. և այս ընթացքով այդ դասակարգը սահմանուած է անհետանալ աւելի թարմ, աւելի գործօն ուժերու առջեւ։ Եւրոպացին իր երկրին համար ալ սպասելիք մը չունի կղերէն, և եթէ Արեւելքի մէջ դեռ կը պաշտպանուին ու կը սնուցուին կրօնական առաքելութիւններ, այդ լոկ քաղաքական շահերու ուեռակէտով է։

Դժբաղդաբար նոյնը չենք կրնար ըսել մեր ազգի համար ալ։ Հայրենիքի մէջ ու անկէ դուրս մեր հոգեւորական դասակարգը իր հեղինակութիւնը և ազդեցութիւնը դեռ կը պահէ։ Մեր ազգային կազմակերպութիւնը ոչ է քաղաքական գոյնէ և ուժէ զուրկ, աւելի կրօնական համախմբութեան հանգամանքն ունի։ Կաթողիկոսէն սկսելով մինչեւ գիւղական տէրտէրը, թէ մեզ կառավարողներէն և թէ մեր ժողովուրդէն կը ճանչցուին իբրեւ ազգին պաշտօնական ներկայացուցիչները։

Աւելին կայ. մեր զարգացած կեդրոններուն մէջ իսկ անչափ սակաւ է ինքնաշխատութեան դիտակցութիւնը, և անչափ թոյլ է ինքնավստահութեան ուժը որ, ոչ է խնդրի մը կարգադրութեանը համար անհրաժեշտ պէտքը կը ղգան կրօնականի մը։

Ամերիկայի հայ գաղութը ինքզինք գտնելու համար հոգեւորականի պէտքը տեսաւ. Ռումանիոյ հայութիւնը բոլորովին չի կորսընցնելու համար եռանդուն և գիտուն հովուի մը ներկայութիւնը հոն անհրաժեշտ կը նկատուի. վերջապէս վարդապետի մը ձեռքով խոթարուած ֆիլիպէցին կարգի մտնելու համար շնորհքով վարդապետի մը կարօտ քաշէց. և այսպէս շատ տեղեր։

Որովհետեւ շատ յոյս չունինք որ մօտաւոր ժամանակի մը մէջ բոլորովին պիտի ազատագրուինք կղերի ձեռքէն, և դեռ պիտի շարունակենք քալել անոնց ետեւէն, և կրել բարերար և կամ չար ազդեցութիւններին, ուղած չուղած ստիպուած ենք անդրադառնալ անոնց։

* * *

Անցած տարի «Մշակ»ի մէջ վիճաբանութիւն բացուեցաւ սա հարցին շուրջը թէ «մեր ազատամիտ ու զարգացած երիտասարդութիւնը հոգեւորականութեան պէտք է ընդունի թէ ոչ»։

Այսինքն այն երիտասարդները, որ ներկայ հոգեւորականներէ տարբեր ըմբռնում ունին հաւատքի և ծէսերու վրայ, որոնք ոչ թէ ուխտ մը կատարելու և Աստուծոյ հաճելի ըլլալու, այլ ուղղակի ժողովուրդին բարոյական և նիւթական զարգացմանը ծառայելու համար պէ՞տք է գլուխնին վեղար մը անցուընեն կամ ուսերնուն վրայ փիլոն մը ձգեն այդ երիտասարդները։

Այս հարցի մասին երկար գրուեցաւ թէեւ, բայց մեր կղերը մնաց ինչ որ էր. այսինքն անոր ամբողջութիւնը կը կազմեն տգէտ, շահասէր և եսամոլ մարդիկ. մինչդեռ քիչ բացառութիւնները, ժողովուրդին շահուն նուիրուածները կը հալածուին ու անգործութեան կը դատապարտուին։

Կղերի այս վիճակը շատ բնական բան մը մըն է. երբ մէկ կողմէն աշխարհիկ կեանքի մէջ չի յաջողուածները կրօնքի ընտրեալ դիրքերուն կը փարին, ամբոխին ղեկավարութիւնը, ղգայումը և խղճմտանքը շահագործելու, և միւս կողմէն մեր ընտրողները խեղալէ, բարոյական և մտաւոր բարձրութենէն աւելի, հասակի, ձայնի և նոյնիսկ մօրուքի առաւելութիւն կը փնտռեն. և այսպէս կազմուած մարմինէ մը կարելի չէ լաւ բան մը սպասել։

Ժողովուրդը հետզհետէ կը պաղի իր եկեղեցիէն, կղերը ինքիրեն ձեռքով է որ իր արմատը կը կարէ. մտէք մեր ժողովուրդի ամենէն մութ խաւերուն մէջ և անոնց բերանը պիտի դնէք տէրտէրի և վարդապետի այնպիսի դայթակղական պատմութիւններ, որ Պօքաչիօն իսկ կը դերազանցեն։

Մեր կղերի ինկած վիճակին դարման մը ըլլալու համար «Մշակ»ի «ինտէլիդէնտ»ներու հարցը վերարծարծել չէ նպատակս, ընդունելով մէկտեղ զարգացած և անձնուէր հոգեւորականներու անհրաժեշտութիւնը, աւելի կենսական կը սեպեմ նախապէս ծեծել սա հարցը թէ «ի՞նչ միջոցներով կրնանք մեր եկեղեցին շրջանակէն դուրս ընել փորձանք եկեղեցականները»։

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

—

Բանասէր հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական եւ քննական տնօրէնութեամբ Կ. Յ. Բասմաջեանի. Ա. գիրք Պարիս 1899։

Նոր մը չէ Կ. Յ. Բասմաջեան, իր պատմական, լեզուագիտական, և բեւեռագիտական խորունկ հմտութիւնովը, և «Բազմավէպի», «Հանդէս-Ամսօրեայի» և ուրիշ թերթերու մէջ հրատարակած ներհուն յօդուածներովը արդէն առաջնակարգ տեղ մը գրաւած է մեր գիտնականներու սակաւաթիւ ակումբին մէջը։

Ոչ ալ «Բանասէրի» մշակելիք ճիւղը նորութիւն մըն է. մեր վերը յիշատակած Մխիթարեան կրկին հանդէսները, մէկը ալեղարդ և փորձուած գիտնականի մը խելացի պահպանողականութիւնովը, միւսը թարմ և յանդուգն երիտասարդի մը եռանդուն ազատականութիւնովը, ազգային և օտար գիտնականներու աշխատութիւնովը տարիներէ ի վեր կը քննադատեն, կուսումնասիրեն մեր հնախօսական ու պատմական էջերն ու լեզուն, և որովհետեւ «շատ քիչ բան ըսուած է տակաւին մեր ազգային հնախօսութեան, քննական պատմութեան և լեզուագիտութեան մասին... ահագին տարածութեամբ խոպան բայց արդասաբեր երկիր մը կը մնայ, որ մշակ բանասիրին բահին ու բրչին կը կարօտի, ուստի և՝ միշտ անոպատ քանակութեամբ ուսումնասիրելի նիւթեր կունենանք մեր առջեւն»։ (Բանասէր էջ 3—4)։ Ուստի Բասմաջեան կը հիմնէ իր հանդէսն ալ բոլորովին մասնագիտական։ Եւ որովհետեւ ինք գործին մարդն է, ուրախութեամբ կողջունենք հաստատութիւնը այս նոր դիտարանին, անցեալի խաւարին մէջը նայելու և զննելու մեր նախնիքներու կեանքն ու գործերը։

«Բանասէրի» հրատարակուած Ա. գիրքը կարդարացնէ խմբագրին վրայ դրուած յոյսերը. 6—45 էջերու մէջ Բասմաջեան կը թարգմանէ Բէհիստունի Դարէհեան արձանագրութիւնը, բաղդատութեամբ ամբողջացուած և ծանօթագրուած. ասոր հմտալից դատաբանին մէջ. կը պաշտպանէ և կընդունի այն կարծիքը, թէ Աքիմենեանց Արմէնիան կազմուած է Ար (արատ) և Մին (նի)—Արմին և ոչ թէ—հար և մինն—Հարմինի—Արմին։

Այս ընդարձակ գրուածքին կը յաջորդեն երկու հնախօսական և պատմական թարգմանածոյ յօդուածներ, առաջինը Պօլսի «Մանուէլեան» մենաստանին (Բէֆէլի մէսջիտ), և երկրորդը Հայոց և Վրաց հին յարաբերութեանցը մասին։

Ասոնցմէ վերջը կուգայ լեզուաբանական յօդուած մը հայերէնի ներդաշնակութեանը մա-

սին, աշխատութիւն Հրաչեայ Աճառեանի։ Երիտասարդ կեդրոնականցիներն պատգամը, որ դպրոցի գրասէրներէն սկսելով կաշխատի այդ ճիւղին, Բարիզի մէջ և ուրիշ տեղեր հեռուստ է նշանաւոր լեզուագէտներու դասախօսութեանց, այսօր Էջմիածին կը գտնուի և Կովկասեան լեզուները կուսումնասիրէ և ծանօթ է իր լեզուաբանական գրուածքներովը և գաւառաբարբառներու ուսումնասիրութիւններովը։

Համառօտ ու թռուցիկ աղդագրական տեղեկութիւններ Ցէբեմցի քուրտերու մասին։

Մատենագրական բաժնին մէջ սկսած է հրատարակել Բարիզի ազգային մատենադարանի հայ ձեռագիրներու ցուցակը. մեր կարծիքով աւելի լաւ է, որ ասոնց համար մասնաւոր հանդէս մը հիմնուի, և կամ առանձին գիրքերով հրատարակուին՝ ինչպէս կընեն Վիէննայի Մխիթարեանք, դէս ու դէն թերթերու մէջ գրուածները ահագին դժուարութիւն կուտան բանասէրներու։

Սուքիաս վարդապետ Պարոնեան այս թիւէն կը սկսի հրատարակել Խորենացիի պատմութիւնը զուղդադրեալ և ծանօթաբանեալ։ Ուրիշ բանասէր մը՝ Նորայր Բիւզանդացի ալ պատրաստած ունի այդպիսի գործ մը, որ դժբաղդաբար մինչեւ հիմա չէ կրցած հրատարակել։ Փափաղելի է որ Հ. Պարոնեան աւելի բարեբաստ դտնուի և Խորենացին կարող ըլլայ քիչ մը աւելի ճերմակերես մնալ քննադատութեան առջեւ։ Էջ մը մատենագրական յետոյ Միւլլերեան տունէն շնորհակալեաց գիրով մը (96) կամբողջանայ Ա. գիրքը, որ հակառակ իր նիւթերուն ծանրութեան՝ հաճոյքով կը կարդացուի։

Եթէ ցաւալի պարագայ մը կայ՝ դրքին վիմագրուած ըլլալն է։ Փափաղելի էր որ մեր բանասէրները քաջալերէին «Բանասէրը», և քանի մը հարուստ դրասէրներ անոր ապագրութեան ծախքը հոգային, երբ մանաւանդ անդին թռուցիկ հանդէսներ իրենց մեկենասները կունենան։

ԵՐՈՒԱԶ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 25 Ապրիլ

Մովսէսեանի դէպքը մեր դրրերը ներկայացնում են հեռաւոր խօսքերով. «Դատ ո՞չ, բայց հէնց Պ. Ա. Մովսիսեանից տեղեկացայ, որ առաջնորդը կանչել է իրեն և ասաուցել, որ այլեւս չմտնի լսարան, ապա թէ ոչ.... իսկ մի օրից յետոյ փոշմանում է և յետ առնում իր հրամանը»։

Մի օրից յետոյ «փոշմանում» խօսքը, վերեւում իմ պատմած ճշմարիտ իրողութեան հետ բաղդատելով, կարող էր իմանալ թէ այդ ասոր արարածները ո՞րքան խեղաթիւրում են դէպքերը, ո՞րքան անազնիւ են դտնում դէպքը խոկութեամբ չը ներկայացնելով։

Դրանք այն ասոլիճան առաջ են գնում, որ Սրբազանի շատերի համար համակրելի մի գործը պախարակում են. մարդ չէ կարող ծիծաղը զսպել, երբ կարդում է հեռաւոր ազգերը. «Սրբազանը Մնդեան ասնին Թաւրիզի 700ի չափ անները մի օրում շրջեց առանց խորութեան, թէ աղքատի և թէ հարստի անները արժանացան Սրբազանի «պահպանիչին»։ Աղքատները ունեւորներից մի քանի զուան վոխ առան Սրբազանին աշխատելու, Սրբազանին ինչ փոյթ հօտի աղքատ և անել կացութիւնը, և այլն»։

Այնինչ Սրբազանը չորս օրուայ մէջ արիւնք տինք մտած 700 տուն օրհնեց, ոչ թէ մի օրում։ Նա խտիր չը դրեց աղքատի ու հարուստի մէջ, իսկ գալով նրան՝ թէ աղքատները փոխ են առել Սրբազանին տալու համար, գուցէ մի քանի տուներ լինին, ոչ թէ աղքատ, այլ միջակ, որոնց մօտ միշտ պատրաստի փող չէ գտնվում արդէն. բայի սրանից, ակնյայտնի իրողութիւն է, որ միայն 200 տուն են աշխատելու ունել, մնացած 500 տունը, լինին աղքատ, թէ միջակ և թէ ունեւոր՝ մի կոպէկ չեն տուած։

Կերեւի, ցանկանում էին որ Սրբազանը իրա նախորդների նման արհամարհէր աղքատներին և միայն հարուստների տները մտնէր, միայն իրա դիպանը մտածելով։ Մենք մեր գրաբերի այս արամաբանութեան տալիք չունինք. սրանք իրանց այս խօսքերով ընթերցողին պարզում են իրանց խելապատակի չափը և գաղափարների ստորութիւնը։ Բոլորովին ընդունակ չեն վեհ զգացումները և մտածումները գնահատել։

Դարձեալ կոկուց են բարձրացնում. «Կան թղթակիցներ, որոնք առաջնորդից ընդունելով մի բաժակ օղի, յօդուտ Սրբազան հօրն են գրում»։

Դարձեալ զրպարտութիւն և անխիղճ սեռակից։ Շատ ճիշդ է, որ նախորդ փոխ-առաջնորդ Սարաճեանի օրով առաջնորդարանը մի գինետան էր վերածուել, գիշեր և ցերեկ օղու շիշը սեղանի վրա էր դրուած, և գիշեր ցերեկ էլ Սարաճեան տրբած վիճակի մէջ էր գտնվում։ Սակայն Այվատեան Սրբազանի օրով խիղճ ունեցող թշնամիներն անգամ չեն կարող ուրանալ, թէ Սրբազանը իրա նախորդին չէ նմանում։

Ժուժկալութեան կողմակից գրաբերը Սարաճեանի օրով ո՞ր ծակն էին մտել, երբ օղու շիշերը միմեանց ետեւից դատարկվում էին. այն ժամանակ ինչո՞ւ ձայն չէին հանում և ասաջնորդարանի պատիւը պաշտպանում։ Որովհետեւ Սարաճեանից պաշտպանվում էին, որովհետեւ չահագործում էին նրան։

Մենք չենք պաշտպանում Սրբազանին, մենք պաշտպանում ենք միայն ճշմարտութիւնը, մենք դիմադրում ենք ֆնատամական հոսանքին, և այս պատճառով իսկ ներկայացնում ենք մեր փաստերն ու ապացոյցները, դէպքերը իրանց իսկական գոյնով, առանց անխիղճ խեղաթիւրումներ անելու, հետեւաբար պէտք չենք զգում մի բաժակ օղի, մեր գրիչը չենք զոհում մեր շահերին։

Եւ սրանք են համարվում թաւրիզի ինտելիգէնտները, սրանք են, որ ասպատայ սերունդ պատրաստելու պարտականութիւն են յանձն առել, սրանք են, որ իրանց գրիչով ուզում են բարձրացնել ժողովրդի բարոյականութիւնը։

Ափսո՞ս այն ժողովրդին, որ սրանց նման մենտորներ ունի. սակայն նորից երանի՞ այս ժողովրդին, որ իրա ծոցումն ունի աղնիւ և առաջադէմ ուժեր, որոնք դիմադրում և թումբ են կազմում այս ստոր արարածների ապականող արարքների դէմ։

Մեր վերջին խօսքը ուղղում ենք այդ արարածներին։

Եթէ իսկապէս ուզում էք ճշմարտութիւնը երեւան հանել, Թաւրիզի հայերի իրաւունքները պաշտպանել և նրանց օգուտը մտածել. եթէ անկեղծ էք ձեր խօսքերի մէջ, համարձակութիւն ունեցէք ձեր իսկական ստորագրութեան տակ երեւան գալ, դէպքերը նկարագրել այնպէս՝ ինչպէս որ են արդէն, այն ժամանակ մենք էլ մեր ստորագրութեան տակ հրապարակ կը դանք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (4)

Ի. ՎԱԶՈՎ

ՊԷԼԻՄԷԼՅԻՆ

(ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ՀԱՅԴՈՒԿԻՄԸ ԿԵԱՆՔԷ)

Ամառնային առաւօտները սովորաբար չուտ եւ արագ կը լուսնան. բոպէի մը մէջ մեր փախստականները տեսան, որ լոյսը բոլորովին տիրած է. արեգակի շողերը ազատ կերպով կանցնէին անոնց քովի ծառերու ճիւղերուն մէջէն։ Քիչ մը առաջուան տիրող խաւարը տեղի տուաւ լոյսին. պայծառ արեւը, ամէն կայկանդումէ զերծ, իր շողերը ղրկելով ամպերու մէջ. քիչ մը առաջուան ճերմակութիւնը շատագոյն կարմրի փոխեց, բոլոր առարկաները տեսակ տեսակ ներկելով։ Պալքանը երեւաց իր ամբողջ վայելչութեամբ. անտառները, հովիտները ու մարգագետինները ուրախութենէ կը փայլին կանաչագեղ գարարութեամբ։ Ծառերու տերեւները ծիրանագոյն են. մօտակայ ջրվէժներն արշալոյսի ցոլացող նշոյլներէն վարդի գոյն կառնուն։ Այս վայրերի բնութիւնը նուրբ կարմիր գոյն մը կառնու... Ի՜նչ գեղեցկութիւն, ի՜նչ զմայլելի տեսարան։

Արեւը ծանրութեամբ կը բարձրանայ։ Վլքանայ եւ Սլավչո իրենց լռութիւնը ամբողջովին լարած՝ լուութեամբ մոլեկ կընեն։ Ամէնուն կեանք պարգեւող արեւը կուզար ասոնց համար վառնգ պատրաստելու։ Իրենց աչքին առջեւ գտնուող Վլայչո Սէլօ գիւղը շարժման մէջ էր արդէն. պարզ կը տեսնուէր թէ ինչպէս ոչխարներու հօտերը զէպի սարերը կը բարձրանային, իսկ կովերու նախիրը կերթար կանաչ մարգերը...։ Գիւղացիք ալ սկսած էին իրենց գործերուն երթալ։

Գայլերու ձայն կուգար, որ հեղհեղէ աւելի որոշ կերպով կը լսուէր. սակայն մարդու ձայն չկար, եկողները գաղտագողի կը մօտենային։

Այն ատենները թուրք զապթիէները առանց վառնգի չէին կրնար մտնալ Պուլկարիոյ այս լեռնային մութ վայրերը. ազատութեան եւ անկախութեան ոգին արծարծուած էր այս լեռնաբնակ պուլկարներուն մէջ։ Թուրք իշխանութեան երեւալը մեծ յուզում կը յառաջացնէր, այնպէս որ կառավարութիւնը ինքն ալ անհանգստութիւն կզգար։ Կային այնպիսի լեռնցիք, որ երբէք զապթիէի մը երեսը տեսած չունէին. իրենց հպատակութիւնը Սուլթանին լոկ անուանական, կեղծ էր։ Տուրք չէին վճարեր, որովհետեւ ոչ ոք կը համարձակէր երթալ տուրք ժողվել այս լեռնցիներէն։

Սլավչո իսկոյն հասկցաւ, որ եկողները իրեն հետապնդող զապթիէներն էին։ Տարօրինակ անձնազոհութիւն կընէին անոնք աւազակի մը եաւէն իյնալով այս անտառին մէջ, քանի որ ոչ վայրը ծանօթ էր իրենց եւ ոչ ալ կրնային գիւղացիներու աջակցութիւնը սպասել։ Բայց իրենց երկու ընկերներու այնքան յանդուգն եւ անակընկալ սպաննումը կատղեցուցած էր զանոնք։ Մէկզի ձգած ամէն վախ, վրէժխնդրութեամբ վառուած, նեռուած էին մարդասպանը հալածելու, գուցէ եւ իրենց թոյլ գտնուելուն պատասխանատուութիւնն էր անոնց անհամբերութեան պատճառը։

Սլավչոն եւ իր կիներ անխոսափելի վտանգի առջեւ էին։ Մինչեւ Պալքանի լանջերը արձակ եւ մերկ տափարակ էր. անոնք չէին կրնար անցնիլ այդ տարածութիւնը աննկատելի կերպով։

Չէին կրնար եւ անտառի վարի կողմը նետուիլ եւ թաղնուիլ. այն ժամանակ ողջ ելլալու յոյսերնին պէտք է կարէին։

Ժամանակը արագարար կը սահէր. ոտքի ձայները կը մօտենային. Սլավչոն որոշում տալու միայն վայրկեան մը ունէր։

Այդ վիթխարի մարդը չուարած էր. ընելիքը չէր գիտեր. ապագայի տխուր պատկերները չէին հեռանար աչքէն։ Նոր կերութիւն, չղթայ. կոիւ. տանջանքի խառնուածք մը կը ցցուէին աչքերուն առջեւ։

Կարծես մահուան հրեշտակը եկած էր իր բազմաչարչար կեանքը հնձելու։ Այս սոսկալի երեւակայութենէն Սլավչո կը գողար տերեւի պէս։ Բայց

և մեր դոյները ցոյց կը տանք։

Այն ժամանակ միայն ժողովուրդը կարող է իմանալ, թէ մեր միջից ո՞վքեր են, որ իրանց գրիչը անձնական շահերին են զոհում, ո՞վքեր են, որ ուղղակի կամ անուղղակի շահեր չունին առաջնորդին պաշտպանելու կամ ամբաստանելու մէջ։ Մենք մեր իսկական ստորագրութիւնը ծածկել ենք միմիայն ձեզ նման ստոր արարածների մատնութեանց զոհ չը դառնալու համար, և ոչ թէ մեր անձնական շահերի համար։

ՄԻՐՋԱ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Լահէէն կը գրեն մեզ թէ Պ. Մինաս Զերաչ հոն հասեր է մայիս 17ին։ Հասնելէն անմիջապէս յետոյ ներկայ գտնուեր է անգլիական և ամերիկեան գաղթականութեանց ինպատ խաղաղութեան կատարած գումարման, և հոն անգլիերէն բանախօսելով յայտարարեր է, թէ խաղաղութեան Վեհաժողովը ապարդիւն պիտի լինի եթէ արդար լուծում մը չը գտնէ Ալզաս-Լօրէնի և Հայաստան—Մակեդոնիայի խնդիրներուն համար, յայտարարութիւն՝ որ հաւանութեան ցոյցերով ընդունուեր է ներկայից կողմէ։ Շաբաթ օրը իմանալով որ Վեհաժողովի անդամներէն և յատուկ թաքը ստացած ակաւաթիւ անձերէ զատ ոչ ոք պիտի արտօնուի Վեհաժողովին յատկացած պալատը մտնել և խնդրագիր տալ. նոսին բացումէն մէկ ժամ առաջ յաջողեր է հոն թափանցել, զինուորական ողջոյն տանելով այն զօրքերէն, որոնք պալատի նմուտքը գրաւած էին ոչ-արտօնեալներն արգիլելու համար և որոնք սակայն, իր շքեղ կառքէն և Պոլիվարի շքանշանի վարդիկէն (rosette) դատելով. Վեհաժողովի անդամ կարծեր են զինքը։ Այս կերպով կրցեր է յանձնել նախագահին ուղղեալ մի խնդրագիր Հայկական հարցի նկատմամբ, հարատահարութեանց մի ընդարձակ յիշատակագիր և այն որոշումները, զորս հաղարաւոր հայեր քուէարկած են Պուլկարիոյ ամէն քաղաքներու միթինկներու մէջ։ Վեհաժողովի անդրանիկ նիստէն անմիջապէս յետոյ, տեսակցութիւններ ունեցեր է զանազան ժողովականներու և թղթակիցներու հետ և կը շարունակէ ունենալ։ Ժողովականներէն մին, ներկայացուցիչ մը հզօր պետութեան, յայտներ է իրեն թէ հայերը Վեհաժողովէն գործնական և անմիջական արդիւնք չեն կարող յուսալ, այլ լաւ ըրած են դիմումներ ընելով և մարդ ղրկելով. որով աշխարհի ուշը գրաւած պիտի լինի իրենց անտանելի կացութեան վրայ։ Ուրիշներ կարծիք յայտներ են թէ, եթէ Վեհաժողովը իրաւախոհութեան ծրագիր մը ընդունի, հայոց վիճակը պիտի բարւոքուի հիմնապէս։

— Բարիզի «Հայ ուսանողական ակումբը» նոր ամսաթերթ մը պիտի հրատարակէ «Համալսարան» անունով։ Տարեկան բաժնեգինը 10 ֆր. է ամէն տեղ։ Ամսաթերթի «Գլխաւոր նպատակն է տարածել հայ ժողովրդի մէջ գիտութիւնը». կըսէ խմբագրութեան մեղ ուղղած յայտարարութիւնը։ Թերթի ծրագիրը շատ լայն ու բազմակողմանի է. եթէ խոստացուածի կէսն անգամ իրականանայ, թերթը խիստ շահեկան հանդէս մը կըրնայ ըլլալ։ Ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք։

——)·(——

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իր նոր հրատարակած «Եւրոպայի Միացեալ Նահանգները խաղաղութեան ժողովոյ երեկոյին» գրքին մէջ Մր. Սթէտ կը նկարագրէ Եւրոպա ըրած ճամբորդութիւնը և նշանաւոր քաղաքագէտներու գաղափարը ներկայ քաղաքականութեան և Խաղաղութեան ժողովին նկատմամբ։ Սթէտ՝ որ հայոց ջերմ համակիր է, շատ մը քաղաքագէտներու հետ տեսնուած է Հայկական խնդրին նկատմամբ, մասնաւորապէս Ռուսիոյ մէջ, որոյ մասին հետեւեալը կը գրէ.

«Ռուսիոյ մէջ, առանց բացառութեան, հակահայկական գաղափար մը կը տիրէ. պատճառը երկու գլխաւոր կէտեր են, նախ՝ Ամերիկեան միսիոնարներու Հայաստանի մէջ ունեցած եռանդուն գործունէութիւնը, զոր անգլիական կառավարութիւնը կը քաջալերէ և որ առիթ տուած է Ռուսիոյ ենթադրելու, թէ անգլիոյ և Ամերիկայի կառավարութեանց միջեւ գաղտնի համաձայնութիւն մը կայ Հայաստանի նկատմամբ, եւ երկրորդը՝ որ գլխաւոր պատճառը ինձ կը թուի՝ հայոց արթուն և խելացի ժողովուրդ մը ըլլալն է։ Ռուսիա լաւ ուսումնասիրած է հայը»։

Սթէտ կը գրէ ամերիկեան միսիոնարներու թուրքիոյ մէջ ունեցած գործունէութեան նկատմամբ, մասնաւորապէս Ռոպէրթ Գոլլէճի վրայ, «որոյ պուլկար ուսանողները անկախ Պուլկարիա մը ստեղծեցին։ Ամերիկեան միսիոնարները ոչ միայն Պոլսոյ մէջ այլ և ամբողջ թուրքիոյ մէջ տարածուած են և ամերիկեան ազատ գաղափարներ կը սերմանեն։ Ռուսիոյ այլադաւան կրօնից տնօրէն ժէնէրալ Մուսալոֆ Էֆմիածին այցելած միջոցին հայոց Կաթողիկոսը Փոքր Ասիոյ աշխարհացոյցը ներկայացուց, որոյ վրայ նշանակուած էին ամերիկեան գոլէճներ, եկեղեցիներ, կրթարաններ։ Ասոնք ամէն տեղ բռնած են. կը քարոզեն, կը սորվեցնեն, նոր կեանք պարգեւելով այս աշխոյժ ժողովրդեան։ Ամէն տարի բաւական մեծ թիւով հայ շրջանաւարտներ կելնեն այս հաստատութենէն, որ գիտեն թէ ինչպէս պէտք է հռչակել անկախութիւնը, և կը տարածուին երկրին ամէն կողմերը։ Անշուշտ նոր գինին հին տիկերուն մէջ չը կրնար լեցուիլ՝ առանց իր ազդեցութիւնը ընելու։ Հայերը՝ խելացի և յառաջդիմասէր ժողովուրդ, իսկոյն հասցան թէ, ինչ որ պուլկարները ըրին, իրենք ալ կարող են ընել։ Եթէ Ռոպէրթ գոլլէճի ուսանողք անկախ Պուլկարիա մը ստեղծեցին, իրենք ալ անկախ Հայաստան մը կրնային ստեղծել։ Գործի սկսան մեծ եռանդով, բայց աւա՜ղ, թէ և անոնք կատարեցին իրենց պարտականութիւնը ամենայն քաջութեամբ, սակայն Ռուսիա մը չը կար, որ իրենց օգնութեան հասնէր։ Սուլթանը յանձնեց զանոնք պաշտպանուելու և քրդերու ձեռքը, որոյ հետեւանքը եղաւ սարսափելի էջի մը ստեղծումը արեւելեան պատմութեան մէջ»։

Այս հեղինակու դժբաղդ քրիստոնէից միակ պաշտպանը անգլիախօս ժողովուրդն է. բայց յաւելու սիրտ կըսեմ, թէ անգլիական կառավարութիւնը բան մը չը բաւատնոյ. վերջերս մի քիչ սթափելով սկսաւ օգնութիւն խրկել։ «Բարիզ գտնուած միջոցիս», կը գրէ Սթէտ, «տեսայ Ամերիկեան երեսփոխան Ֆրայ, որ պատանի, երբ Սլավչոն արդէն ծառին վրայ էր։

Գիւղին մուխտարն (տասնապետ) ալ զապթիէներուն հետ էր. Սլավչոն զանի ճանչցաւ. ճիւղին ետեւէն իր երկու ատրճանակները արձակեց զապթիէներուն վրան։

Ալացուցիչ որոտում մը պայթեցաւ, որու տառաղական արձագանգը թնդացուց անտառապատ լեռները։ Հրազէնի ծուխը ցրուելէն յետոյ Սլավչո տեսաւ, որ զապթիէ մը ինկած էր հոգեվարքի մէջ. տեղը ամայացած էր։ Սլավչո նկատեց, որ ինկած զապթիէի ընկերները կը փախչէին ծառերու բուներուն քովէն սլքտալով, եւ ամէն կերպ պաշտպանութիւն փնտռելով անտիրոյթ թշնամիներու գնդակներէն։

* *

Այս դէպքէն բաւական ժամանակ անցած էր. Սլավչոյի սպանութիւնները անագին աղմուկ հանեցին։ Կառավարութիւնը, որ միշտ առիթ կը փնտռէր պուլկար գիւղացիները տանջելու, յարմար առիթ գտաւ այս անգամ։ Թուլամորթ զապթիէները չը կրնալով պէշ-մէյցին ողջ-ողջ բռնել, թոյս տուին կռուի դաշտէն, իրենց վրէժխնդրութեան թոյնը թշուառ Պէշ-Մէյ գիւղի վրայ թափելու համար։ Ամբողջ գիւղը քշեցին Սոֆիա։ Նեսո չօրպաճիին մատը կար այս գործին մէջ։

Անոր ցուցուցած գիւղացիները կը ձերբակալէին. շատ մը անմեղներ զրպարտած եւ չարախօսած էր։

Կամաց կամաց այդ դէպքը մոռցուեցաւ եւ ապաւորութիւնը սառեցաւ։

Պէշ-Մէյը հանդստացաւ։ Սլավչո նոր հրոսակային խումբ մը կազմած, սկսաւ իր ասպատակութիւնները։ Կը մասնակցէր եւ իր կինը Վլքանան։

Վլատքօն առին Վլքանայի հեռաւոր ազգականները եւ կը խնամէին, բայց տունը անտէր մնալով, ամայացաւ։

Այս գարուն Սլավչոյին վերաբերեալ զրոյցները աւելի զօրեղ կերպով կը տարածուէին։ Ոմանք տեսած էին Բուլժային գիւղին մօտերը, ձորի մը մէջ, որ իր գաղտնի բնակարանն էր։ Շաբաթ մը առաջ Թուրք քըր-աղասիին դէմ հրացան պարպուած էր։ Ամէնքն ալ հաւատացած էին, թէ Սլավչոյի խումբն էր այդ ընողը։

Սարսափը տիրած էր. Թուրք պաշտօնեայները իրենց երթեւեկութիւնը ազատ չէին կրնար ընել այս անտառներու մէջէն։ Սլավչոյի նոր եւրուումը ամէնուն ալ ահաբեկած էր։ Սլավչոն ամէն տեղ օրուան հերոսն էր։ Անոր պատկերը կը վերակենդանանար պէշ-մէյցիներուն վառ սրտերուն մէջ։

Գաղտնի հրճուանք մը կար, երբ կիմանային թէ իրենց քաջը դեռ ողջ է եւ վրէժ կը լուծէ ազգային թշնամիներէն։ Կուրախանային, որ իրենց կը պաշտպանէր անտիրոյթ զօրեղ ձեռք մը իրենց արիւնը խմող թշնամիին դէմ։ Բայց մէկ կողմէն ալ կը վախնային, որ Սլավչոյի նոր գիւցազնութիւնը կրնար ամբողջ գիւղը վատնել։

— Նա իր մազը լեռնէն առած է, բաւ չօրպաճի Նեսոն. օր մը անոր կաչին ալ կը քերթեն։ Ըսէք այն

այդ երկար չը տեւեց. վերջին յիշեց իր կռիւներով լի փառաւոր անցեալը. գլխուն մազերը տընկուեցան, աչքերը ուռեցան կատաղի ցուլի մը պէս, որ պատրաստ է իր ճակատովը պատերը խորտակել։

Սլավչոն վճռեց կռուիլ մինչեւ վերջին շունչ... կարծես թէ անոր վիթխարի հսկայի աւելի բարձրացաւ, իր ուժեղ բազուկները մկանային զօրեղ ջղացգութեամբ մը սեղմեցին զօրին խրուած եաթաղանը։

Նա վճռած էր սոսկ դանակով մը դիմադրել հալածողներուն, եւ անոնցմէ մսակոյտեր կազմել։ Սակայն այս յուսահատական որոշումը ակնթարթի մը մէջ փոխուեցաւ. նա չը հանեց իր եաթաղանը, այլ կայծակի արագութեամբ թռաւ ծառի մը վրայ եւ թաղնուեցաւ անոր տերեւախիտ ճիւղերուն մէջ։ Վլքանան վազեց նոյն ուղղութեամբ եւ ծառին տակը կեցաւ։

Զապթիէներն ալ կը շարունակէին իրենց գաղտագողի հետապնդումը։ Ճիշդ այն ժամանակին հասան

Պոլիվարի շքանշանի վարդիկէն (rosette) դատելով. Վեհաժողովի անդամ կարծեր են զինքը։ Այս կերպով կրցեր է յանձնել նախագահին ուղղեալ մի խնդրագիր Հայկական հարցի նկատմամբ, հարատահարութեանց մի ընդարձակ յիշատակագիր և այն որոշումները, զորս հաղարաւոր հայեր քուէարկած են Պուլկարիոյ ամէն քաղաքներու միթինկներու մէջ։ Վեհաժողովի անդրանիկ նիստէն անմիջապէս յետոյ, տեսակցութիւններ ունեցեր է զանազան ժողովականներու և թղթակիցներու հետ և կը շարունակէ ունենալ։ Ժողովականներէն մին, ներկայացուցիչ մը հզօր պետութեան, յայտներ է իրեն թէ հայերը Վեհաժողովէն գործնական և անմիջական արդիւնք չեն կարող յուսալ, այլ լաւ ըրած են դիմումներ ընելով և մարդ ղրկելով. որով աշխարհի ուշը գրաւած պիտի լինի իրենց անտանելի կացութեան վրայ։ Ուրիշներ կարծիք յայտներ են թէ, եթէ Վեհաժողովը իրաւախոհութեան ծրագիր մը ընդունի, հայոց վիճակը պիտի բարւոքուի հիմնապէս։

— Բարիզի «Հայ ուսանողական ակումբը» նոր ամսաթերթ մը պիտի հրատարակէ «Համալսարան» անունով։ Տարեկան բաժնեգինը 10 ֆր. է ամէն տեղ։ Ամսաթերթի «Գլխաւոր նպատակն է տարածել հայ ժողովրդի մէջ գիտութիւնը». կըսէ խմբագրութեան մեղ ուղղած յայտարարութիւնը։ Թերթի ծրագիրը շատ լայն ու բազմակողմանի է. եթէ խոստացուածի կէսն անգամ իրականանայ, թերթը խիստ շահեկան հանդէս մը կըրնայ ըլլալ։ Ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք։

——)·(——

մեց, թէ երկու տարի առաջ իր ամբողջ ջանքը եղած է համոզել Ուաշինկթընի կառավարութիւնը որպէս զի նուաստորմ մը ղրկէ Պոլիս Հայկական խնդրոյն համար, բայց դժբաղդաբար իր կոչը անլսելի մնացած է։ Եթէ Ֆրայի առաջարկը ի գործ դրուէր, թերեւս ոպանիական պատերազմը տեղի չունենար։ Ֆրայ, որոյ Հայաստանի և Քուպայի վրայ դրած աղդու յօդուածներն հրատարակուեցան բազմաթիւ թերթերու մէջ, համարձակօրէն ինձ ըսաւ թէ, ինք Քուպայի ազատութեանը կը ջանայ։ Երբ տեսայ թէ, ըսաւ նա, «Հայկական խնդրոյն միջամտելու խոստումը չը կրցայ առնել, Քուպայի խնդիրը ձեռք առի և սկսայ դրել։ Ուրիշ աղդու համակիրներով յաջողեցանք Քուպայի խնդրոյն միջամտումը ձեռք բերել։ Բայց դարձեալ ամէն մի վայրկեան կը մտածեմ Հայաստանի վրայ։ Նպատակը նոյնն էր, բայց Հայաստանի պէտքը աւելի՛ շատ է, քան թէ Քուպայի. միայն թէ վերջինին մէջ ունէինք ղբրութիւն և պարտականութիւն, հետեւաբար խորհեցայ թէ, եթէ մենք Քուպայով սկսինք, մեր առջեւ ճամբայ մը բացած պիտի ըլլանք, որուն վրայէն կարող ենք անցնիլ Թուրքիա»։

«Խաղաղութեան դաշնագիրը կնքուելէ վերջ, բարեկամս ինձ եռանդուն նամակ մը դրելով կըսէ. Սպանիոյ բռնակալութիւնը վերցաւ Քուպայէն և Փորթօ Ռիկոյէն, հիմա կարգը եկած է Հայաստանի»։

Մթէտ գուշակութիւն մը կընէ Թուրքիոյ նկատմամբ. «մի օր, կըսէ, Թուրքերը իրենց սովորական անգթութեամբ պիտի այրեն աւրշակեն ամերիկեան միսիոնարներու շէնքերը, և միսիոնարները բոցերուն մէջ խորովելէն յետոյ, անոնց կիներն ու աղջիկները պիտի առեւանգեն։ Այս խժդժութեան լուրը ուշ կամ կանուխ անշուշտ պիտի հասնի Միացեալ Նահանգները. սոսկալի յուզում մը պիտի տիրէ ժողովրդին մէջ իբր թէ իրենց իսկական քոյրերն ու եղբայրներն եղած լինէին, և յետոյ մէկ սիրտ ու մէկ հոգի պիտի դիմեն Ուաշինկթընի կառավարութեան և պիտի կոչեն. «՞ուր է այն զօրաւոր նուաստորմը, որ բռնակալ Սպանիան ջախջախեց։ Ո՞ւր են Սամիսը, Շլայ, Ուաթսըն և Տուլի քաջ ծովակալներն՝ և երբ պատասխան առնեն՝ այն ատեն պիտի աղաղակեն «Ուրեմն ի Տարտանէ՛լ. ի Տարտանէ՛լ»։ Նաւատորմը պիտի ճեղքէ Տարտանէլը և պիտի անցնի Պոլիս. Թնդանօթները պիտի գոռան, Սուլթանը և իր վայրենի ժողովուրդը առ ահի պիտի փախչին. այն ատեն ասանելազարդ դրօշը պիտի ծածանի Բիւզանդիոնի վրայ, որուն տակ պիտի տիրեն աղատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն...»

ՁԵԼՕ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Նիքոլա Բ.ը 1,500,000 ռուբլի նուիրեր է ռուսական «Կարմիր խաչի» ընկերութեան, որ սովատանջ նահանգներու մէջը գործադրուի։ Մե՞ծ բարերարութիւն...

— Երկաթուղային գծերու մրցումը կաճի Թուրքիայի և Պարսկաստանի մէջ։

Ռուսական քանի մը ընկերութիւններ կուզեն շարունակել Տիֆլիս—Կարս գիծը Էրզրումի վրայով Տիարպէքիր և անկէ ալ Պարսից ծոցը։ Ուրիշ ռուսական ընկերութիւն մը Երեւանի գիծը կուզէ Հիւ-Զուղայէն Սալմասի վրայով տանիլ Պարսից ծոցը։ Այս ընկերութիւններուն կը թեւարկէ ռուս կառավարութիւնը։ Միւս կողմէն ալ անգլիական ընկերութիւն մը Իսկէնտերունի վրայով Տիարպէքիր և Պարսից ծոց կուզէ գիծ մը անցնել։ Իսկ Անատոլիի գերման ընկերութիւնը կուզէ շարունակել Էնկիւրիի գիծը Սեբաստիայի, Խարբերդի և Տիարպէքիրի վիլայէթներով դէպի նոյն ծոցը։ Բոլոր ընկերութիւններն ալ իրենց կառավարութիւններուն օգնութիւնը կը վայելեն։

— «Թան» կը հաղորդէ Պ. Զերպալի Լահէյ հանիլը, անոր ըրած գիմումը Եայլն, այն ամէնը ինչ որ մեր ազգային լրաբամնին մէջ հաղորդած է մեզ մեր թղթակիցը։

—Ոմանեան և գերմանական պանքաները համաձայնած են Անատոլիի և Իրմիր-Բասրայի երկաթուղիի գծերու մասին։ Երկու պանքաներն ալ երկուքական անձեր պէտք է ունենան այդ գծերու վարչութեան մէջ։ Որովհետեւ այդ գծերը պիտի աւելի տարածուին Փոքր-Ասիոյ մէջ, ատոր համար ալ ֆրանսական ընկերութեան մէն ալ 40 առ հարիւր օգտուելու իրաւունքով մասնակցութեան առած են։

—Կրէտէ եղած օտար բանակներու զինուորներու թիւը իջեցուցեր են 500ականի, և այդ 2000 հոգին ալ մնալու են հոն մինչեւ կրէտական տեղական պահակազօրքերու վերջնական կազմութիւնը։

— Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքին մէջ ժանտախտի երկու կասկածելի դէպքեր են պատահած։

——)·(——

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Մեր յարգոյ բաժանորդներէն կը խնդրենք որ փութան աշարժումի երկրորդ տարուան բաժնեգիները ղրկել մեզ, կամ վճարել մեր գործակալներուն։ Արդէն տարւոյն երեք ամիսը անցաւ։ Իրենց բաժնեգիները չը վճարող անձերու թերթերը պիտի սիպուինք դադրեցնել։

ԱՀԶԴ

—

Յառաջիկայ սեպտեմբերին պիտի բացուի Վառնայի մէջ Ա. Սմիրխանեանցի անուրինութեամբ օրիորդաց Հայկական դպրոցը, ուր Օր. Լ. Սմիրխանեանց գլխաւոր վարժուհի դիրը պիտի կատարէ։

Ուսանելու սովորական առարկաներէն զատ, եւ բացի Հայերէն ու Պուլկարերէն լեզուներէն, որք պարտաւորիչ պիտի ըլլան, կան նաեւ Ֆրանսերէն, Գերմաներէն եւ Անգլերէն լեզուները։

Գիները՝ ամսական 10, 6 եւ 3 լեվ։

Դաշնակ—ամսական 15 լեվ 8 դասի համար։

5—6 Տնօրէն

Աբր. Սմիրխանեանց

ԿՈՒԶԷ՞Ք ՀԱՐՍՏԱՆԱՅ.

—

Դիմեցէ՛ք

Մ. Թիւթիւնճեան եւ ընկ.

ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սոֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճականութեան Բ. չրջանի տոմսակները։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.

անպիտանին, թող այս կողմերէն հեռանայ։ Մեզի հանդիսա թող։

Անցան քանի մը օրեր. գիւղի հօտարածներէն մին սարէն իջնալով, Նեսո չօրպաճիին գնդակ մը բերաւ վրան խաչ մը գծուած եւ ըսաւ անոր.

— Չօրպաճի Նեսո, Սլավչօն քեզ շատ բարեւներ, եւ անոր քովէն գալս հաստատելու համար, քեզի այս նուէրը բերած եմ։

Նեսո չօրպաճին առանց գնդակին դիպելու, ապշած նայեցաւ։

— Էհ, ի՞նչ կուզէ, ինչո՞ւ այս գնդակը ինծի կը ղրկէ, հարցուց չօրպաճին։

— Ահա թէ ինչու. հրամայեց որ քեզ յայտնեմ, թէ վաղուընէ 30 զոյգ արեւի ղրկես անոր խմբին, կէս օրա վառօդ ու 4 օրա ծխախոտ եւ Եղիայի (յուլ. 20)ուն սեղան մը պատրաստես, որովհետեւ քեզ հիւր պիտի ըլլայ...

Նեսո չօրպաճին սոսկումով նայեցաւ Նայէնին, (հովիւին անունը) եւ ըսաւ.

— Դու այդ տեսակ գործերո՞ւ համար կուգաս այն աւազակին քովէն։

— Զօրպաճի, ես յանցաւոր չեմ. գիտես որ մենք լեռան մարդ ենք. մեր ամէն ինչը անոնց ձեռքն է. եթէ մտիկ չընենք... Սլավչօն յանձնարարեց. ես ալ կը կատարեմ... մնացածը դուն գիտես։

— Բայց այս գնդակը ինչո՞ւ ղրկեց։ Նայէնո՞ կը լոկ։

— Ի՞նչ կուզէ հասկցնել այս գնդակով։

— Չեմ գիտեր, աղա։

— Չիս պիտի սպաննէ՞։

— Չեմ գիտեր, աղա։

— Խաչը ի՞նչ կը նշանակէ, ըսաւ Նեսո, գնդակը զննելով։

— Այո, խաչ մը կայ, հաստատեց Նայէնը։

— Ինչո՞ւ համար է։

— Սլավչօն այս խաչը համբուրած է եւ երդուած է, որ եթէ իր յանձնարարածը չը կատարես.....

Նեսոի աչքերուն մէջ կրակ փայլեցաւ։

— Լաւ, իմ պատասխանս տար։ Եւ Նեսոն գնդակը նետելով Օկսթային մէջ, ձեռքերը դրպան դրաւ եւ անհոգութեամբ ըսաւ.

—Նայէն—ատ բարեւներս կը տանիս այդ աւազակ Սլավչօին։

— Դիլխուս վրայ չօրպաճի։ Ուրեմն ես սպասե՞մ։

— Չէ. դնա, ըսէ որ վառօդը եւ արեխները չը պիտի ղրկեմ. այն տօնին երբ ինձ հիւր պիտի ըլլայ, անոր այնպիսի սեղան մը պատրաստեմ, որ իր կեանքին մէջ չը պիտի վայելէ։ Չօրպաճիին դէմքը բոլորովին կապուցաւ։ Միամիտ Նայէնը անոր կը լսէր առանց դիտելու անոր այլայլութիւնը եւ առանց հասկնալու քողարկուած բառերուն կծու նշանակութիւնը։

— Մնաս բարով, աղա, գլխուս վրայ. ըսաւ Նայդէնը, չալկեց իր տոպրակը, վերցուց դաւազանը եւ ճամբայ ելաւ։ Խեղճ հովիւը կերեւի չը հասկցաւ չօրպաճիին սպառնական խօսքերը։

Այս չատ զայրացուց Նեսոին։ Նա կուզէր որ Նայէնը լաւ հասկնար իր պատասխանի իսկական նշանակութիւնը եւ Սլավչօին տանէր անոնց բուն միտքովը։ Նա ետ կանչեց հովիւին։ Նայէն ետ դարձաւ եւ անոր նայեցաւ։

— Ինչ անասուն ես եղեր. միտքդ չհասկցար, զայրանալով ըսաւ Նեսոն։ Ըսէ այն հին արիւնարբու ոճրագործին, թող եղիայի տօնին տունս հրամէ, իրեն եւ ընկերներուն միասին պիտի հիւրասիրեմ մեր չուրջը սաւառնող ագռաւներուն եւ արծիւներուն։ Եւ այդ աւազակին գլուխը այս ցանկապատին վրայ պիտի ցըցեմ, որ ամէնքն ալ սարսափին։ Այն ատեն այդ մարդասպանը կը հասկնայ չօրպաճի Նեսոի ինչ ըլլալը։

Խեղճ հովիւը վախէն քարացաւ եւ ըսաւ։

— Լաւ չես ըներ, չօրպաճի, վերջը շատ գէշ կըլլայ... քեզի շատ չարիքներ կրնայ հասցնել...

— Դուն ալ այդ աւազակը պահողը չըլլա՛ս, առնակ, գոչեց Նեսոն։

— Աստուած չընէ, աղա։

— Հա, հա, պաշտպանէ այդ շունը։

Նեսոն չօրպաճիի բարկութիւնը հեղհեղուկ կը սատկանար։

— Մնաս բարով, չօրպաճի, ըսաւ Նայդէնը եւ մութ փողոցներու մէջ կորսուեցաւ։

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ